ուխտ 'ի նմա. և 'ի սահմանս բերդին հաստատեալ էին և այլ գլխաւոր աթոռք և վանորայք նոցին, յԱբրակունիս՝ յորում այժմ 43 տուն Հայ. 'ի Խոշակունիս՝ որ արդ Խօշքէշին կոչի, և յիշի տեղիս յաւուրց Տիգրանայ Հայկազնոյ, ուր արդ 12 տուն մահմետական: — Փառա, յորմէ Յովհաննէս հայ առաջնորդ Ունիթոռաց և թարգմանիչ լատին գրոց 'ի սկիզբն ԺԴ դարու. այժմ մահմետականք բնակեն անդ 30 տուն, և են աւերակք վանից և եկեղեցեաց. — Նորաշէն, 40 հայ և 15 թուրք տամբք. և հեռագոյն յարևելս Շոռոթ աւան, 20 հայ և 10 թուրք տամբք. մերձ է 'ի սա Անապատ անուն մենաստան: — Ի Թիկանց՝ որ է յարևմտից հարաւոյ սոցա՝ ամբառնայ Երնջակ լեառն, յորոյ քարաձերպս ղեռան օձք. 'ի ստորոտս լերինն կայ մատուռն Կեղուն կոչեցեալ, ուրանօր աւանդեն գագաւթեալ առ վայր մի սրբոց հախախմանց:

154. Ի հարաւոյ մոից լերինս և 'ի սահմանամէջս գաւառացն Նախիջևանայ և Որդուպատայ առ խառնըրդովք Ալինձայ յԵրասխ՝ կան աւերակք հնոյն ՋՈՒՂԱՑ որ և ՃՈՂԻ, 'ի քարափն բարձու 2500', որ 'ի Հայկազանցն ժամանակաց շինեալ կայր, և բնակեցաւ 'ի յաղնուաց գերութեանն Մարաց. 'ի միջին ժամանակս 'ի նուազել այլոց քաղաքաց Հայոց՝ պայծառանայր սա ճարտարութեամբ վաճառական բնակչացն, և եղև շահաստան անուանի և ճոխ և շինեցաւ քարաշէն եկեղեցեօք, ապարանօք և կամըրջօք. և վաճառականք նորա երթային մինչև յԻտալիա և յայլ քաղաքս ուրէք Եւրոպիոյ. 'ի սկիզբն ԺԷ դարու Շահաբաս Պարսից արքայ՝ գաղթեցոյց բռնութեամբ զճարտար բնակիչսն



Դուռն և Աշտարակ Աթաբէկեան Ապարանիցն 'ի Նախիջևան. — La Tour et la porte du palais des Atabeks à Nakhitchevan.